ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք։
/ ՀՀ Սահմանադրություն,հոդված 39 /

Ժամանակակից կրթական գործընթացը վերջին շրջանում ենթարկվել է լուրջ փոփոխությունների՝ պայմանավորված տեղի ունեցող սոցիալ-մշակութային, քաղաքական, տնտեսական բուռն գործընթացներով: Փոխվում է դեմոգրաֆիկ իրավիճակը, համաշխարհային շուկայում ի հայտ են գալիս նոր տեխնոլոգիաներ, որոնք նորարարությունները կառավարելու հնարավորություն են ընձեռում: Այս հանգամանքով պայմանավորված՝ վերանայվում են կրթության բովանդակությունը, նպատակները, խնդիրները, ինչպես նաև ուսուցման ձևերը, մեթոդներն ու տեխնոլոգիաները: Դպրոցի մանկավարժական գործընթացում, բնականաբար, մեդիատեխնոլոգիաների ներդրման հրատապ պահանջ է առաջանում: Դպրոցը կանգնում է նոր մարտահրավերների առաջ, այն ոչ միայն պետք է կարողանա կանխատեսել փոփոխությունները, այլև նորարարությունները ներդնել այնպես, որ ունենա իր համար շահեկան, մրցակցային առավելություններ, մշտապես բարելավի մատուցվող ծառայությունների որակը, կարողանա բավարարել սպառողների արագ փոփոխվող պահանջները, այլ կերպ ասած՝ թվային կրթական միջավայրը իսկական հեղաշրջում է առաջացրել կրթության պահպանողական համակարգի նկատմամբ, ինչն այսօր ժամանակակից զարգացած պետության մեջ դարձել է կրթության անհրաժեշտ մակարդակի ապահովման կարևոր մասնիկ:

Մեդիատեխնոլոգիաները դարձել են հասարակական կյանքի անբաժանելի մասը, իսկ դրանց կիրառումը մանկավարժական գործընթացում՝ կարևոր գործոն կրթության որակի բարելավման համար: Այս համատեքստում ժամանակակից ուսուցչի մեդիագրագիտությունը դարձել է պարտադիր պահանջ և աշակերտների մեդիակարողությունների ձևավորման կարևոր գործիք:

Այսօր արդեն մարդկային հիշողությունը տեղափոխվել է վիրտուալ դաշտ, ինչին մեծապես զարկ տվեցին համացանցը և որոնման համակարգերը: Ժամանակակից աշխարհում միայն մասնագիտական գիտելիքներ ունենալը քիչ է, և մարդուց պահանջվում է ունենալ մեդիահմտություն՝ հարափոփոխ աշխարհում արագ հարմարվելու համար:

Համաձայն «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի՝ հանրակրթության բնագավառում պետական քաղաքականության հենքը ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված և մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորումն է: Համաձայն նույն հոդվածի՝ հանրակրթության բնագավառում պետական քաղաքականության կազմակերպական հիմքը կրթության զարգացման պետական ծրագիրն է, որի հիմնադրույթները հիմք են ընդունվել «Երևանի երաժշտական թիվ 13 հատուկ դպրոց» ՊՈԱԿ (այսուհետ՝ Դպրոց) զարգացման ծրագիրը մշակելիս: Միևնույն ժամանակ՝ սույն փաստաթուղթը մշակելիս, հիմք են ընդունվել ՀՀ կառավարության կողմից հաստատված կրթության առանձին ոլորտների ռազմավարական ծրագրերը և զարգացման հայեցակարգերը, ինչպես նաև հաշվի են

առնվել դպրոցի տեղակայման վարչատարածքային առանձնահատկությունները, Դպրոցի առկա վիճակը, նպատակային ուղղվածությունը, մանկավարժական և վարչական կազմի կարողությունները, նյութատեխնիկական հագեցվածությունը, ֆինանսական կարողությունները և այլ առանձնահատկություններ:

Ազգային դպրոցը նպատակաուղղված է համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորմանը:

Դպրոցը պետք է դաստիարակի մտածող, վերլուծող, քննադատող քաղաքացի: Հայաստանի կրթության զարգացման հեռանկարը անհրաժեշտ է դիտարկել երկրի ազգային և պետական անվտանգության տեսանկյունից:

«Երևանի երաժշտական թիվ 13 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ի 2023-2028թթ. զարգացման ծրագիրը մշակվել է ուղեցույց ունենալով Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման պետական ծրագիրը և ՀՀ կառավարության կողմից հաստատված կրթության առանձին ոլորտների ռազմավարական ծրագրերի զարգացման հայեցակարգերը, կրթության և հանրակրթության մասին օրենքները: Սույն ծրագրի մշակման համար կատարվել են հետևյալ հաջորդական քայլերը՝

- հավաքվել է տեղեկատվություն դպրոցի մասին,
- ուսումնասիրվել են դպրոցի ուժեղ և խոցելի կողմերը,
- սահմանվել են նպատակներն ու խնդիրները
- խնդիրների և նպատակների իրականացումն ապահովող գործողությունների և միջոցառումների ժամանակացույցը
- առանձնացվել են պատասխանատուները
- գնահատվել են ռիսկերը:

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Երևանի երաժշտական թիվ 13 հատուկ դպրոցը հիմնադրվել է 1943թ-ին, Սուխումի քաղաքից Երևան փոխադրված ռազմական երաժշտական գիշերօթիկ դպրոցի հենքի վրա: 1961թ-ին դպրոցը տեղափոխվում է ներկայիս տարածք միացվում թիվ 15 հանրակրթական դպրոցի հետ և վերանվանվում Երևանի երաժշտական թիվ 13 գիշերօթիկ/հետագայում հատուկ/դպրոցի:
2003թ. այն վերակազմակերպվել է որպես Երևանի երաժշտական թիվ 13 հատուկ դպրոց պետական ոչ առևտրային կազմակերպություն:

Երևանի երաժշտական թիվ 13 հատուկ դպրոց պետական ոչ առևտրային կազմակերպությունը /այսուհետ դպրոց/ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ուսումնական հաստատություն է:Հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության: Դպրոցն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենքներով և իր կանոնադրությամբ: Դպրոցը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով:

Դպրոցն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանով և իր հայերեն անվանմամբ կլոր կնիք, ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

Դպրոցի գործունեության առարկան և նպատակը կրթական բնույթի գործունեության իրականացումն է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կողմից հանրակրթական և հատուկ հանրակրթական, երաժշտական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնի յուրացման ապահովմամբ: Դպրոցը կրթական գործունեություն իրականացնում է ի շահ անհատի, հասարակության և պետության, անհատի բազմակողմանի զարգացումը, նրա առողջության պահպանումը, պայմաններ ստեղծում ինքնակրթության և լրացուցիչ կրթության պահանջմունքների բավարարման համար:

Դպրոցի գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության և մարդասիրության հանրամատչելիության, ազգային և համամարդկային արժեքների զուգորդման, անձի ազատ զարգացման, ինքնավարության և կրթության աշխարհիկ բնույթի սկզբունքների վրա:

Դպրոցը հիմնադրի կողմից սահմանած կարգով կարող է զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ:

Դպրոցն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա ուսումնական հաստատությունների հետ:

Դպրոցում արգելվում է իրականացնել քաղաքական գործունեություն կամ քարոզչություն: Կրոնական գործունեությունը և քարոզչությունն արգելվում են՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:



Դպրոցը գործում է ՀՀ ԿԳՄՍ նախարարության ենթակայությամբ, ունի կառավարման խորհուրդ՝ կազմված 8 անդամներից, խորհուրդը իր գործունեությունը իրականացնում է համաձայն խորհրդի հաստատած աշխատակարգի.

Դպրոցի խորհրդակցական մարմիններն են՝ մանկավարժական, ծնողական աշակերտական խորհուրդները:

Դպրոցն իր տեսակով միակն է հանրապետությունում, որը իրականացնում է համակարգված, հանրակրթական և երաժշտական կրթություն, միաժամանակ սովորողների համար ապահովելով գիշերակաց: 1-12 դասարաններում իրականացվում են տարրական, հիմնական ընդհանուր, միջնակարգ /լրիվ/ ընդհանուր հանրակրթական և մասնագիտական ծրագրեր: Այս երկու տարբեր ուսումնական ծրագրերը լրացնում են մեկը մյուսին: Արվեստը, երաժշտական մտածողությունը և հոգևոր արժեքները օգնում են սովորողներին ընդգրկուն և ամբողջական յուրացնելու հանրակրթական ծրագրերը: Դպրոցում մասնագիտական գործիքներից դասավանդվում են պղնձյա փողային, փայտյա փողային, հարվածային, քանոն, դաշնամուր, ինչպես նաև վոկալ երգեցողություն:

Դպրոցը միջնակարգ /լրիվ/ ընդհանուր կրթությունը իրականացնում է եռաստիճան համակարգով, 12 տարի ընդհանուր տևողությամբ, հետևյալ հաջորդական աստիճաններով.

1-ին աստիճան՝ 4 տարի տարրական ընդհանուր 1-4 դասարաններ

2-րդ աստիճան՝ 5 տարի հիմնական ընդհանուր 5-9 դասարաններ

3-րդ աստիճան՝ 3 տարի միջնակարգ /լրիվ/ ընդհանուր 10-12 դասարաններ

<u>Տարրական դպրոցն</u> ապահովում է երեխայի ընդհանուր զարգացումը, կարդալու, գրելու, հաշվելու, հմտությունների և կարողությունների, բարեկիրթ խոսքի ու վարվելաձևի, ինքնասպասարկման պարզագույն հմտությունների, անձնական հիգիենայի և առողջ ապրելակերպի հիմունքների տիրապետումը: Տարրական դպրոցի մասնագիտական ծրագրերը ապահովում են երեխայի երևակայության զարգացումը, երաժշտական տարրական գիտելիքների հաղորդմամբ երաժշտական մտածողության զարգացումը ,սոլֆեջոյի, հարմոնիայի, տեսության և

ռիթմիկայի միջոցով մտքի երաժշտական արտահայտության ձևերին և հմտություններին տիրապետելը: Տարրական կրթությունը ավարտվում է գիտելիքների ստուգմամբ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով:

Միջին դպրոցում /հիմնական ընդհանուր/ ուսուցումը նպատակաուղղված է առողջ ապրելակերպի, աշխարհի և բնության վերաբերյալ սովորողների գիտական պատկերացման ձևավորմանը, ինքնուրույն աշխատանքի, կրթության և հասարակական ինքնուրույն գործունեության համար անհրաժեշտ գիտելիքների նվազագույն ծավալի ապահովմանը: Միջին դպրոցի մասնագիտացված ծրագրերը նպատակաուղղված են երաժշտական միտքը արտահայտելու ձևերին, հնարքներին տիրապետելու կարողությունների զարգացմանը: Համաշխարհային և ազգային արվեստի պատմության ուսումնասիրման միջոցով գեղագիտական մտքի և ճաշակի ձևավորմանը:

Տարրական և միջին դպրոցները միասին կազմում են հիմնական դպրոցը:

Ավագ դպրոցում /միջնակարգ /լրիվ/ ընդհանուր/ ուսուցումը ուղղված է հենքային հանրակրթական պատրաստվածությունն ապահովող գիտելիքների յուրացմանը, ինչպես նաև սովորողների հակումներին և ընդունակություններին համապատասխան մասնագիտական կարողությունների զարգացմանը, մասնագիտական կողմնորոշմանը՝ կրթության շարունակականությունը ապահովելու համար, կիրթ, գրագետ, բազմակողմանի զարգացած քաղաքացի դաստիարակելուն:

Հիմնական ընդհանուր և միջնակարգ /լրիվ/ ընդհանուր կրթության և մասնագիտական կրթական ծրագրերի յուրացումն ավարտվում է շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների պարտադիր ամփոփիչ ատեստավորմամբ, որի կարգը սահմանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

Դպրոցի ուսումնական պլանը բաղկացած է երկու բաղադրիչից: Առաջինը ապահովում է հանրակրթությունը և համապատասխանում է հանրակրթական դպրոցի պետական ուսումնական պլանին, իսկ երկրորդ բաղադրիչը արտահայտում է երաժշտական մասնագիտացված ծրագրի ժամաքանակը:

Երևանի երաժշտական թիվ 13 հատուկ դպրոցը ունի մոտ 234 սովորող: Ձևավորվել են 17 դասարաններ՝ 13.5 աշակերտ միջին խտությամբ: Հաստատությունը սպասարկման կոնկրետ տարածք չունի, քանի որ իր տեսակի մեջ միակը լինելով՝ սպասարկում է ողջ հանրապետությանը, սովորողների մի մասի համար գիշերակաց ապահովելով: Ամեն տարի հաստատությունը ունենում է տարբեր դասարանների աշակերտների մեծ ներհոսք և արտահոսք, որը պայմանավորված է երաժշտության նկատմամբ հակումների երևակման ժամանակային և տարիքային առանձնահատկությամբ: Սակայն նոր սովորողների առկայությունը բացարձակապես չի անդրադառնում դպրոցի բնականոն և ստեղծագործ աշխատանքի ընթացքի վրա: Ջերմ և բարյացակամ մթնոլորտում նոր և հին աշակերտների ինտեգրումը կատարվում է ընդհանուր հետաքրքրությունների, հանդուրժողականության և բարձր մարդկային արժեքների հարթությունում:

Դպրոցում ուսումնական գործընթացը կազմակերպվում է մոտ 70 մանկավարժների միջոցով: ՈՒսուցիչների միջին ծանրաբեռնվածությունը կազմում է շաբաթական 22 ժամ: Կան

ուսուցիչներ, որոնք թերբեռնված են, որը պայմանավորված է ուսումնական պլանով: Հանրակրթական առարկաների գրեթե բոլոր ուսուցիչները մասնակցել են ԿԳՄՄՆ-ի կողմից կազմակերպվող վերապատրաստումներին և անցել համապատասխան ատեստավորում:

Դպրոցում գործում է մոտ 50 հոգանոց փողային նվագախումբ, որը իր փորձերն անցկացնում է նվագախմբի համար նախատեսված սենյակում: Դպրոցն ունի հարուստ ձայնադարան, մոտ 3000 սկավառակ, որը նպաստում է գեղարվեստական մտքի, ճաշակի ձևավորանը և զարգացմանը, նպաստում է համաշխարհային և հայ երաժշտաարվեստի ուսումնասիրությանը, որի համար ստեղծվել է նաև գրադարան և տեսադարան:

Դպրոցի գրադարանը տարվա ընթացքում սպասարկել է 1500 կտոր գիրք: 250 սովորող և ուսուցիչ՝ որպես ընթերցող, մշտապես օգտվում են գրադարանից: Գեղարվեստական և մեթոդական գրականությունը կազմում է 4120, իսկ դասագրքերը՝ 1754 կտոր: Աշակերտների մեջ ընթերցանության նկատմամբ սեր արթնացնելու նպատակով պարբերաբար կազմակերպվում են ընթերցված գրքի քննարկումներ:

Անմխիթար վիճակում են ուսումնական հաստատության մասնաշենքերը: Դպրոցի գործունեությունն իրականացվում է 2 մասնաշենքում ուսումնական և հանրակացարանային, որոնք շատ խիստ ունեն հիմնանորոգման կարիք: 2007թ-ին վերանորոգվել են մի քանի սանհանգույցներ: Դպրոցը տաքացվում է լոկալ ջեռուցմամբ:

Դպրոցը գտնվում է Ծովակալ Իսակով պողոտայի միջնամասում: Անշարժ գույքի սեփականության վկայագրի և գլխավոր հատակագծի համաձայն ունի 1.140 հա հողատարածք, որից շենքը զբաղեցնում է 5740.9 քմ: Դպրոցի տարածքի մի մասի օտարումից հետո, դպրոցը

կորցրեց մարզահրապարակը: Ունի սովորողների հանգստի համար հարմար և ապահով պարսպապատ ներքին բակ:

Հաստատությունը չունի առանձնացված միջոցառումների դահլիճ: Դպրոցի մարզադահլիճը ծառայում է նաև որպես միջոցառումների դահլիճ:

ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ուժեղ և թույլ կողմերը

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Աշխատակազմի գործունեության ուժեղ կողմեր • Մանկավարժական վերապատրաստված, ատեստավորված, բանիմաց կոլեկտիվ, • Մանկավարժական կադրերի ճիշտ ընտրություն և նրանց որակական ցուցանիշի բարձրացում, • Ուսումնադաստիարակչական աշխատանքի պատշաճ մակարդակ, • Ներքին կարգապահություն • Մասնագիտական առարկաների որակյալ դասատուներ: **Սովորողների ուսումնառության և մասնագիտական կրթության ուժեղ կողմերը** • Բուհական /ԵՊԿ, ԵՄՀ/ ընդունելության բարձր ցուցանիշ, • Օտար լեզուների իմացություն /Ռուսերեն, Անգլերեն, Գերմաներեն/, • Միջազգային և հանրապետական փառատոնների մասնակցություն և հաջողություններ • Որակյալ փողային նվագախմբի գործունեություն:	**Աշխատակազմի գործունեության թույլ կողմերը** • Նորամուծությունների նկատմամբ մանկավարժների պասիվ հետաքրքրություն: **Սովորողների ուսումնառության թույլ կողմերը** • Առարկայական օլիմպիադաների նկատմամբ հետաքրքրության պակաս: **Ծնողների, կառավարման խորհրդի և այլ մարմինների գործունեության թույլ կողմեր** • Ավագ դասարաններում ծնողների հետևողականության

Ծնողների, կառավարման խորհրդի և այլ մարմինների գործունեության ուժեղ կողմեր

- Դպրոցում գործում են կառավարման, մանկավարժական, ծնողական և աշակերտական խորհուրդներ, որոնք կանոնավոր գումարում են նիստեր և կազմակերպում աշխատանքները,
- Դպրոցը համագործակցում է ծնողների հետ, բաց դասեր, համերգներ և այլ միջոցառումներ կազմակերպելիս:

Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազայի ուժեղ կողմերը

- Մասնակի ուժեղ կողմ կարելի է համարել երաժշտական գործիքների համալրումը:
- Սովորողների և աշխատողների հանգստի համար ունի ներքին պարսպապատ բակ:

Հաղորդակցության և համագործակցության ուժեղ կողմեր

պակաս,

- Դպրոցի ուսումնական գործընթացում ծնողի ներգրավվածության ցածր մակարդակ,
- Աշակերտական և ծնողական խորհուրդների միջև համագործակցության պակաս:

Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազայի թույլ կողմերը

- 1961 թվականից շենքի վերանորոգման կամ հիմնանորոգման պակասը,



- Դպրոցը համագործակցում է ԿԳՄՄՆ-ի, ԿՏԱԿ-ի ԱԻՆ-ի, ԵՊԿ-ի, ԵՄՀ-ի, ոստիկանության և այլ կազմակերպությունների հետ,
- Դպրոցի պաշտոնական կայքէջում և սոցիալական ցանցերում լուսաբանվում է դպրոցի գործունեությունը:

Բյուջե, ֆինանսներ

- Կայուն պետական ֆինանսավորում,
- Ֆինանսների ճիշտ և գրագետ բաշխում:



- Լաբորատորիայի և ՆԶՊ դասարանի և զենքի բացակայություն,
- Ֆիզիկայի և քիմիայի լաբորատորիաների նյութատեխնիկական կահավորանքի պակաս,
- Մարզահրապարակի բացակայություն,
- Մարզական գույքի պակաս,
- Հանդիսությունների դահլիճի բացակայություն:

Հաղորդակցության և համագործակցության թույլ կողմեր

Բյուջե, ֆինանսներ

- Արտաբյուջետային միջոցներ:

ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

Կրթական գործի կազմակերպումը պետք է ունենա էվոլյուցիոն բնույթ, այսինքն՝ պահպանելով մեր ձեռքբերումները, այն պետք է հարստացնենք և կատարելագործենք նոր մեթոդներով, տեխնոլոգիաներով և մոտեցումներով:

Շփումը արվեստի, հոգևոր արժեքների հետ օգնում է սովորողներին ընդգրկուն և ամբողջական յուրացնելու հանրակրթական ծրագրերը, ինչպես նաև հայրենիքի պատմությունն ու մշակույթը իմացող արժանապատիվ ու լայնախոհ քաղաքացի դաստիարակելուն:

Կրթահամալիրի զարգացումը ենթադրում է երեք ուղղություն.

1. Ծրագրամեթոդական, բովանդակային աշխատանքների հարստացում: Ուսուցիչների աշխատանքի արդյունավետության բարձրացում, ժամանակակից տեխնոլոգիաների ներդրում կրթությունը գրավիչ և որակական նոր մակարդակի հասցնելու համար:
2. Նյութատեխնիկական, գործիքային և շենքային պայմանների բարելավում:
3. Համագործակցության շրջանակների ընդլայնում բովանդակային և ներկայացուցչական նպատակներով:

Դպրոցում ստեղծված առողջ, կենսախինդ և ստեղծագործ մթնոլորտը պետք է պահպանել և զարգացնել, որպեսզի սովորողը և ուսուցիչը շիտակ և անմնացորդ նվիրումով վերաբերվեն կրթության գործընթացին, որպեսզի կրթօջախը իրապես վերածվի մեկ տան, մեկ ընտանիքի, որտեղ տիրում է հարգանքի և փոխըմբռնման մթնոլորտ: Միայն այսպիսի մթնոլորտում է հնարավոր կրթել և դաստիարակել արժանապատիվ սերունդ: Այսպիսով, կարևոր է ուսուցչի բարոյահոգեբանական, քաղաքացիական գիտակցումը և մարդկային բարձր որակները:

Դպրոցը, իր տեսակի մեջ միակը լինելով, պետք է դառնա հանրակրթական, երաժշտական և ընդհանրապես գեղարվեստական կրթություն իրագործող հաստատությունների համար ծրագրամեթոդական կենտրոն, որտեղ մեր ուսուցիչների կողմից մշակված դասակարգված, շարունակական, գեղարվեստական կրթության առարկայական ծրագրերը, մեթոդիկաները և փորձը կարող են նոր մակարդակի վրա դնել գեղարվեստական կրթությունը: Այս նպատակով պարբերաբար կկազմակերպվեն սեմինարներ, վարպետաց դասեր, մեթոդական ընթերցումներ ինչպես մայրաքաղաքում, այնպես էլ մարզերում գեղարվեստական կրթություն իրականացնող հաստատությունների սովորողների համար:

Շատ եմ կարևորում մասնագիտական, մանկավարժական, հոգեբանական գիտելիքների, կարողությունների և հմտությունների կատարելագործման նպատակով ինքնակրթությամբ զբաղվող ուսուցիչներին աջակցելու ուղղությամբ կատարվող աշխատանքները: Բոլոր ուսուցիչները պետք է տիրապետեն տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաներին, որպեսզի կարողանան ներդնել դասավանդման գործընթացում և այն դարձնեն սովորողի համար հետաքրքիր ու բազմազան: Այս նպատակով պարբերաբար կկազմակերպվեն համակարգչին տիրապետելու պարապմունքներ ուսուցիչների համար:

• Կրթությունը գրավիչ դարձնելու համար անհրաժեշտ է ստեղծել պայմաններ ժամանակի պահանջներին համաձայն:

• Համալրել համակարգչային դասարանի տեխնիկան, ավելացնել համակարգիչների քանակը, տպիչ սարքերը, ձեռք բերել ֆոտո և տեսախցիկներ:

• Հարստացնել արվեստի պատմության կաբինետի տեսադարանը և գրադարանը:

• Լաբորատորիաների և կաբինետների գույքի և պարագաների նորացում և հարստացում, որը կծառայի սովորողների տեսական գիտելիքների գործնական, կիրառական կարողությունների և հմտությունների զարգացմանը:

• Նոր առարկայական կաբինետների ստեղծում:

• Սովորողների բարոյահոգեբանական, գեղագիտական, քաղաքացիական դաստիարակությունը՝ հիմնված համամարդկային, ազգային բարձր արժեքների վրա, արդյունավետ իրագործելու համար կստեղծվի հոգեբանական աջակցության ծառայություն, որը դասղեկների հետ մշտապես կանցկացնի հարցումներ տարբեր թեմաներով, սովորողներին հուզող և հետաքրքող հարցերի շրջանակը պարզելու համար: Ընտրված և առավել հուզող թեմաների շուրջ համապատասխան մասնագետների միջոցով կկազմակերպվեն բաց դաս-դասախոսություններ, անհատական զրույցներ և այլն:

• Տարբեր առարկաների համար տեսա-ձայնաժապավենների, համակարգչային սկավառակների և դիտակտիկ այլ նյութերի ձեռքբերում շաբաթական մեկ ժամ համակարգչային դասարանում պարապմունք անցկացնելու համար:

• Յուրաքանչյուր ուսուցիչ պետք է ունենա տեղեկատվական տեխնոլոգիաներին հասու լինելու հնարավորություն ուսուցողական անհրաժեշտ նյութեր (թեստեր, հարցաթերթեր և այլն) կազմելու և բազմացնելու համար, դասաժամը լիարժեք և հետաքրքիր կազմակերպելու համար:

• Դասարաններում տեղադրել էլեկտրոնային գրատախտակներ:

ՍԱՀՄԱՆՎԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ

Հ/Հ	ՆՊԱՏԱԿ	ԺԱՄԿԵՏ	ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ
1	Ծրագրամեթոդական, բովանդակային աշխատանքների հարստացում: Ուսուցիչների աշխատանքի արդյունավետության բարձրացում	2023-2028	Տնօրեն, տնօրենի տեղակալներ
2	Երաժշտական գործիքային պայմանների բարելավում	2023-2028	Տնօրեն, երաժշտական գծով տնօրենի տեղակալ
3	Նյութատեխնիկական բազայի հարստացում	2023-2024	Տնօրեն, վարչատնտեսական գծով տնօրենի տեղակալ

4	Շենքային պայմանների բարելավում	2023	Տնօրեն, վարչատնտեսական գծով տնօրենի տեղակալ
5	Համագործակցության շրջանակների ընդլայնում	2023-2028	Տնօրեն, տնօրենի տեղակալներ
6	Համակարգչային դասարանի տեխնիկական հագեցվածություն	2023-2024	Տնօրեն, տնօրենի տեղակալներ
7	Լաբորատորիայի հիմնում, կաբինետների գույքի և պարագաների նորացում և հարստացում	2023-2025	Տնօրեն, տնօրենի տեղակալներ
8	Հանգստի սենյակի ստեղծում և կահավորում	2023-2024	Տնօրեն, տնօրենի տեղակալներ
9	Սովորողների բարոյահոգեբանական, գեղագիտական դաստիարակության բարձրացում	2023-2028	Տնօրեն, տնօրենի տեղակալ ՄԿԱ գծով,
10	Արևային ջրատաքացուցիչի տեղադրում գիշերակացի մասնաշենքում	2023-2024	Տնօրեն, վարչատնտեսական գծով տնօրենի տեղակալ
11	Խոհանոցային սպասքի և անկողնային պարագաների թարմացում	2023-2025	Տնօրեն, վարչատնտեսական գծով տնօրենի տեղակալ
12	Բակի կանաչապատում և ձևավորում	2023-2025	Տնօրեն, վարչատնտեսական գծով տնօրենի տեղակալ
13	«Հոգեբանի անկյուն» ստեղծում	2023-2024	Տնօրեն, հոգեբան

Երևանի Երաժշտական h. 13 հատուկ դպրոց

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ

Կառավարման և խորհրդակցական մարմիններ

«Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 75-րդ կետով ամրագրված է:

Հանրակրթական դպրոցում կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման, ինչպես նաև զարգացմանն աջակցելու և համայնքի հետ արդյունավետ համագործակցություն ապահովելու նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական խորհուրդ, առարկայական մեթոդական միավորումներ, ծնողական, աշակերտական խորհուրդներ: Խորհրդակցական բոլոր մարմիններն ունեն իրենց կանոնադրությունը, որը կազմում է դպրոցը՝ հիմք ընդունելով օրինակելի կանոնադրությունը: Կանոնադրությամբ սահմանվում են տվյալ մարմնի գործունեության լիազորություններն ու պարտականությունները: Շատ կարևոր է, որ խորհուրդներն ունենան իրական ինքնավարություն, ազատ լինեն իրենց գործողություններում՝ պահպանելով իրենց պարտականություններն ու իրավունքները: Երբ խորհրդակցական մարմինները գործում են ձևական, չեն կատարում կամ մասամբ են կատարում իրենց պարտականությունները, դպրոցում ուսումնադաստիարակչական, կառավարման գործընթացներն էականորեն տուժում են:Ըստ իս, տնօրենը պետք է կարողանա գնահատել և ժամանակին միջոցներ ձեռնարկել խորհրդակցական մարմինների աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու, ձևական գործընթացները դադարեցնելու համար:

❖ **Կոլեգիալ կառավարման մարմինը՝ խորհուրդը**

Դպրոցի խորհուրդը ձևավորվել է ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 2010 թվականի մարտի 18-ի N113-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգի» համաձայն, որի անվանականկազմը (բաղկացած 9 հոգուց) հաստատվել է ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 2021թվականի հունվարի 21-ի N16-ի որոշմամբ:

Լիարժեք գործող խորհրդի դեպքում դպրոցի հաջողությունները կկրկնապատկվեն, իսկ մասնակցային կառավարման և ընդունվող որոշումների թափանցիկության ապահովման

առումով դպրոցի նկատմամբ վստահությունը կբարձրանա ոչ միայն լիազորված պետական մարմնի, այլև ծնողների և համագործակցող այլ կազմակերպությունների մոտ:

Խորհրդից ակնկալում եմ առողջ քննադատություն և բազմակողմանի աջակցություն՝ ի շահ դպրոցի և նրա գլխավոր շահառու հանդիսացող աշակերտների:

❖ **Խորհրդակցական մարմինները**

Օրինակելի կանոնադրության 33-րդ և 34-րդ կետերով ամրագրված է, որ ուսումնադաստիարակչական աշխատանքի արդյունավետ կազմակերպման, ինչպես նաև համայնքի, ծնողների հետ արդյունավետ համագործակցություն ապահովելու նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական խորհուրդ, առարկայական մեթոդական միավորումներ, ծնողական, հոգաբարձուների խորհուրդներ: Հանրակրթական դպրոցում կարող են ձևավորել խորհրդակցական կամ խորհրդատվական այլ մարմիններ:

Դպրոցի գործունեությունը լիարժեք և արդյունավետ կազմակերպելու համար իրականում շատ կարևոր է բոլոր մարմինների համագործակցված և բարեխիղճ աշխատանքը և ինչպես նշված է օրինակելի կանոնադրության 58-րդ կետում «Հանրակրթական դպրոցի տնօրենը, նրա տեղակալները, խորհրդի, ինչպես նաև խորհրդակցական մարմինների անդամները հանրակրթական դպրոցի անունից հանդես գալիս պետք է գործեն բարեխղճորեն և ողջամտորեն ի շահ իրենց կողմից ներկայացվող հանրակրթական դպրոցի»:

ա. Մանկավարժական խորհուրդ

Օրինակելի կանոնադրության համաձայն՝ դպրոցի մանկավարժական խորհուրդը չնայած, որ օրենսդրությամբ սահմանված կարգով խոհրդակցական մարմին է, այնուամենայնիվ քննարկում և ընդունում է այնպիսի կարևորագույն հարցեր ու որոշումներ, որոնք էապես ազդեցություն են ունենում ուսումնադաստիարակչական աշխատանքների որակի վրա:

Քննարկվող հարցերի օրակարգը և ընդունված որոշումների բնույթը շատ հաճախ պայմանավորվում է տնօրենության կողմից, իսկ տվյալ դեպքում՝ մանկավարժների պասիվ կեցվածքը տնօրենությանը սխալվելու հնարավորություն է տալիս՝ հատկապես ներդպրոցական խնդիրները բացահայտելու և դրանք հնարավորինս մեղմ ու սեղմ ժամկետում լուծելու ուղղությամբ:

Ակնհայտ է, որ թեև տնօրենի աշխատանքը կարևոր է և առանցքային վերափոխումների իրականացման խնդրում, սակայն հիմնական և վերջնական արդյունքը պայմանավորված է

նրանով, թե որքանով են ուսուցիչները (մանկավարժները) վերափոխումների և դպրոցի զարգացմանը պատրաստ:

Եթե փոփոխություններ իրականացնելիս հաշվի չի առնվելու ուսուցիչների փորձը, ապա այդ փոփոխությունները դատապարտված են անհաջողության, ուստի դպրոցի զարգացման ճանապարհին առանցքային եմ համարում ուսուցիչների (մանկավարժների) մոտեցումները և առաջարկությունները:

Գտնում եմ, որ դպրոցի առաքելությանը միտված աշխատանքը դրական արդյունք կտա միայն այն դեպքում, երբ մանկավարժական կոլեկտիվը կարձագանքի փոփոխություններին, կարտահայտի իր սեփական դիրքորոշումը և կաշխատի թիմային գաղափարով: Մեր ուսուցիչները իրենց ունեցած գիտելիքներով կօգնեն ինձ ոչ միայն մանկավարժական խորհրդում, այլև առօրյա աշխատանքային պրոցեսում ճիշտ որոշումներ ընդունել:

Անհատականությունը և կոլեկտիվիզմը հավասարապես կարևոր են (Պետք է կարողանալ ոչ միայն միանձնյա, այլև կոլեկտիվ որոշումներ կայացնել):

բ. Առարկայական մեթոդական միավորումներ

Այս օղակը դպրոցի, կարելի է ասել, ամենաառաջնային և կարևորագույն օղակն է, որը ի թիվս այլ հարցերի. քննարկում է հանրակրթական առարկայական չափորոշիչներին համապատասխան ուսումնական ծրագրերի, ուսումնական պլանների նախագծերը. առաջարկություն է ներկայացնում տնօրենին՝ ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամերի տնօրինման.

կատարում է ուսումնական պլանով սահմանված դասաժամերի նախնական բաշխում և առաջարկություն է ներկայացնում տնօրենին.

ուսուցիչներին հաղորդակից է դարձնում մանկավարժության նորագույն նվաճումներին, նպաստում է ուսուցիչների որակավորման բարձրացմանը.

կազմակերպում է առարկայական օլիմպիադաներ, մրցույթներ, միջոցառումներ և այլն:

Վերոնշյալից ակնհայտ է, որ դպրոցի բովանդակային մասն ապահովողը հենց այս օղակն է, որի կատարած աշխատանքների կամ նրա բազիսի վրա կառուցվելու է դպրոցի առաջընթացի բուրգը՝ «Դպրոց՝ բոլորի համար» մեր երազանքների շենքը:

Ուսուցիչների աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու և նրանց ոգևորելու նպատակով կիրառելու եմ ուսուցչին խրախուսելու մեթոդը (բարոյական և նյութական):

Ամեն գործընթաց վերահսկողության տակ պահելով՝ ներմուծելու եմ բոլորի կողմից ընդունելի արժեքներ ու նոր գաղափարներ, իսկ առօրյա աշխատանքում՝ կպահպանենք միայն այն հին ավանդույթը, ինչը կնպաստի նորի կայացմանն ու զարգացմանը:

գ. Ծնողական խորհուրդ

Դպրոցի դասարանների ծնողական խորհուրդները նախագահ և երկուսից չորս անդամի կազմով ընտրվում են դասարանի ծնողների ընդհանուր ժողովի կողմից մեկ ուսումնական տարվա համար, իսկ դպրոցի ծնողական խորհուրդը կազմավորվում է դասարանների ծնողական խորհուրդների նախագահներից:

Դպրոցի սովորողի ծնողի իրավունքներն ու պարտականությունները սահմանված են «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածում:

Հանրակրթության քաղաքականության իրականացման և կրթության որակի արդյունավետության բարձրացման ուղղությամբ դպրոցի կողմից կազմակերպվող աշխատանքը միշտ թերի կլինի, եթե ծնողը դպրոցի և կրթության նկատմամբ, մասնավորապես, անտարբեր գտնվի:

Ծնողների և մանկավարժների համագործակցությամբ պետք է մշակվեն երեխայի հանդեպ միասնական պահանջները և հստակեցնի դաստիարակչական խնդիրները: Երեխաների գիտելիքների, ձեռքբերումների, հակումների և դժվարությունների մասին պարբերաբար իրազեկվեն ծնողներին՝ ժողովների, տնայցերի և առանձին հանդիպումների միջոցով:

Աջակցեն ծնողական խորհրդին (այդ թվում՝ դասարանական) իրենց աշխատանքի և այլ միջոցառումների (էքսկուրսիա, տոնակատարություն, դասարանական ժողով, կոնֆերանս և այլն) կազմակերպման հարցերում:

Ուսումնական տարվա սկզբին ծնողների և երեխաների համատեղ գործունեության պլանավորմամբ հստակեցվեն համագործակցության բովանդակությունն ու եղանակները, աջակցեն տարեկան աշխատանքային պլանի կազմմանը՝ դպրոցի ուսումնադաստիարակչական պլանին և սույն զարգացման ծրագրին համապատասխան:

դ. Աշակերտների հետ աշխատանք

Ժողովրդավարության և ինքնավարության սկզբունքներին համապատասխան դպրոցի գործունեության կազմակերպմանը նպաստող, անմիջականորեն իրենց վերաբերող հարցերի մասին սովորողների կարծիքի ազատ արտահայտումն ապահովող և սովորողների իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ դպրոցի կանոնադրության դրույթների

պահպանումը վերահսկող օղակ, կարելի է ստեղծել աշակերտական խորհրդին նմանվող մի մարմին հիմնական՝ կամավորության, սովորողների իրավահավասարության և հրապարակայնության հիման վրա:

Անկախ նրանից, որ մենք սովորեցնում և աջակցում ենք սովորողներին իրենց ինքնավարության մարմինները ձևավորելիս, այնուամենայնիվ, հաճախ թերահավատորեն ենք վերաբերվում նրանց գործունեությանը և ուղղորդում աշխատանքները մեր ցանկությանը համապատասխան, դրանով սահմանափակելով նրանց ինքնավարությունը, ազատ ու քննադատաբար մտածողությունը, նոր գաղափարների առաջադրմանն ու ինքնուրույն կայացմանը:

Մենք պետք է աջակցենք նրանց, ոչ թե թելադրենք մեր որոշումները:

Որոշումների կայացման գործընթացում պետք է ակտիվորեն ներգրավենք աշակերտներին: Դա կնպաստի մեր առաքելությանը և նրանց մասնակցության և պատասխանատվության զարգացմանը:

Ի վերջո մեր բոլոր ջանքերը ուղղված են սովորողին և հենց նրա միջոցով էլ մենք պետք է՝ դպրոց ընդունված երեխային ծանոթացնենք դպրոցին և նրա առօրյային.
սովորողների մեջ արմատավորենք «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով սահմանված սովորողի իրավունքներն ու պարտականությունները, ծանոթացնենք դպրոցի ներքին կարգապահական կանոններին.

- ստեղծենք միասնական թիմ՝ «Դասարան-դպրոց-համայնք-պետություն» գաղափարով.
- ծանոթանանք երեխաների խնդիրներին ու կարիքներին, նրանց առանձնահատկություններին, հետաքրքրություններին ու նախասիրություններին.
- պլանավորենք աշակերտների հետ տարվող դաստիարակչական և արտադասարանական աշխատանքները.
- օգնենք սովորողին ոչ միայն կրթվելու, այլև իր ընդունակություններին ու կարողություններին համապատասխան մասնագիտական կողմնորոշումը ապահովելու և իր համար մասնագիտություն ընտրելու հարցում և այլն:

Այսպիսով՝ դպրոցի շահերից ելնելով՝ շատ կարևոր է, որ դպրոցում, կրթական գործընթացի մասնակիցները, անկախ ներդպրոցական վերահսկողության մակարդակից ու հանգամանքից, ունենան իրական ինքնավարություն, ազատ լինեն իրենց գործողություններում՝ պահպանելով ՀՀ օրենսդրությամբ իրենց վերապահված իրավունքներն ու պարտականությունները

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

Յուրաքանչյուր տարի հաստատությունը խորհրդին է ներկայացնում ծրագրի կատարման ամենամյա հաշվետվությունը, որը ներառում է ծրագրի յուրաքանչյուր բաղադրիչի կատարման վերաբերյալ չափելի տեղեկատվությունը: Ուսումնական հաստատությունը ներկայացնում է տարեկան աշխատանքային պլանի հաշվետու ժամանակաշրջանի համար հաշվետվություն, որը ներառում է.

ա. նախատեսված խնդիրների կատարմանն ուղղված առանձին գործողությունների կատարման արդյունքները և դրանց հիմնավորումները.

բ. չկատարված կամ թերի կատարված գործողությունների պատճառները.

գ. սահմանված նպատակների և խնդիրների կատարման գնահատումը.

դ. զարգացման ծրագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկություններ.

Համաձայն հանրակրթության մասին ՀՀ օրենքի դպրոցի զարգացման ծրագրի իրականացման վերահսկողությունը դպրոցի կառավարման խորհրդի գործառույթն է:

Դպրոցի ամենամյա աշխատանքային պլանը կազմվում է ըստ 5-ամյա զարգացման ծրագրի:

Ծրագրում կատարված փոփոխությունները ներկայացվում են դպրոցի կառավարման խորհրդի հավանությանը:

Տարեկան աշխատանքային պլանով նպատակներն ու խնդիրները սահմանվում են ըստ անելիքների առաջնահերթության:

Ծրագիրը մշտադիտարկվում և քննարկվում է մանկավարժական խորհրդի և ծնողական խորհրդի կողմից:

Ծրագրի իրատեսությունը և նրա արդյունավետության վերաբերյալ վերլուծությունները դրվում են խորհրդակցական մարմինների քննարկմանը:

Աշխատանքների իրականացման վերահսկողությունը իրականացվում է դպրոցի կառավարման, մանկավարժական և ծնողական խորհուրդների կողմից:

Հաստատության հաշվետվությունները հասանելի են լինում հաստատության շահառուներին՝ պետական լիազորված մարմիններ, դպրոցի աշխատակազմ, սովորողներ, համայնք:

Համադպրոցական ծնողական ժողովներում, ինչպես նաև միջոցառումների և դասարանական ժողովների ժամանակ մատչելի ներկայացվում են կատարված աշխատանքները, իրազեկվում անելիքների մասին:

Դպրոցի կայքէջը, ծնողների և աշակերտների համար նախատեսած հայտարարությունների վահանակը, ինչպես նաև դպրոցի ֆեյսբուքյան էջը լիարժեք ծառայում են իբրև իրազեկման, համագործակցության և լուսաբանման հարթակներ:

Կազմակերպվում են հարցախույզեր, մոնիտորինգներ, քննարկումներ, վերլուծություններ: Արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է դպրոցի

կայքէջում:

Անհրաժեշտության դեպքում կատարվում են փոփոխություններ, տրվում այլ լուծումներ:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ

Դպրոցի զարգացման ծրագրի իրականացման ընթացքում հնարավոր ռիսկերն են՝

- Երկրի ֆինանսական քաղաքականության փոփոխությունը, սոցիալ-տնտեսական վիճակի կտրուկ վատթարացումը
- Դպրոցի ֆինանսավորման բանաձևի փոփոխություն, որը կարող է հանգեցնել ֆինասավորման կրճատման
- Հաստիքների կրճատումը, գլոբալ փոփոխություններ
- Աշխատանքի իրականացման թույլ վերահսկողությունը
- Խնդրահարույց և պրոբլեմատիկ իրավիճակների ոչ մասնակցային մոտեցումը դպրոցի կառավարման գործընթացում
- Ուսուցչական կազմի փոփոխության բացասական ազդեցությունը
- Ուսուցիչների վերապատրաստումների նկատմամբ անլուրջ վերաբերմունքը և թիմային աշխատանքում չընդգրկվելը
- Ծրագրերի ոչ իրատեսական լինելը, այն է՝ պահանջարկի և առաջարկի անհամարժեքությունը
- Ծախսերի և պահանջների անհամապատասխանությունը
- Երկրում ստեղծված անկայուն վիճակ – արտագաթղ, պատերազմ, համավարակ
- Արտակարգ իրավիճակներով պայմանավորված առցանց կրթություն:

ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Դպրոցի ֆինանսավորման հիմնական աղբյուրը պետբյուջեն է: Օժանդակություն կարող է լինել նաև բարերաների կողմից:

Դպրոցը ֆինանսավորում ստանում է պետական բյուջեից՝ ըստ սովորողների թվի, ինչը իրականացվում է ամիս առ ամիս:

Դպրոցը չունի ֆինանսական խնդիրներ. Աշխատավարձը ինչպես նաև արձակուրդայինը տրվում են ժամանակին և կանոնավոր կերպով:

Ֆինանսական միջոցները ուղղվում են հարկային պարտավորությունների կատարմանը, կոմունալ վճարների և այլ ծախսերի: Ծրագրավորված կառավարման շնորհիվ հաստատությունը իր խնայողությունների հաշվին գրեթե ամեն տարի իրականացնում է երաժշտական նոր գործիքների և աքսեսուարների ձեռքբերում: Գործիքների ձեռքբերման հարցում օժանդակում են նաև բարերարները:

Ֆինանսական հաշվետվությունները և նախահաշիվները պարտաճանաչ տեղադրվում են դպրոցի կայքէջում:

ՎԵՐՋԱԲԱՆ

Դպրոցը՝ որպես բաց համակարգ, գտնվում է արտաքին ներգործությունների ազդեցության տակ, յուրացնում է նորամուծությունները, գտնվում մշտական փոփոխության մեջ, բնական գիտություններում այդ գործընթացը կոչվում է դիսիպացիա (ցրում), այսինքն կարգավորված գործընթացների էներգիայի մի մասի անցումը չկարգավորված գործընթացների էներգիայի: Եվ առաջանում է զարգացման անշրջելիու¬թյուն, ինչն ապահովվում է զարգացող ենթահամակարգերի ստեղծմամբ: Կառավարման համակարգում որպես նմանատիպ ենթահամակարգեր կարող են դիտվել ուսուցիչների ստեղծագործական խմբերը (թիմերը), որոնք կրթական ոլորտում կպայմանավորեն սիներգետիկ (համագործակցային) էֆեկտիվ երևույթներ դպրոցի ստորաբաժանումների կոլեկտիվ շարժման տեսքով՝ ընդհանուր

նորարարական խնդիրների լուծման համար: Գուցե այս ճանապարհով կհաղթահարվեն դպրոցի առջև դրված խնդիրները.

Որքան էլ ընդհանուր լինեն պահանջները, օրենքներն ու ծրագրերը, յուրաքանչյուր դպրոց ունի իր առանձնահատկությունները և դրանից բխող մարտավարությունը:

Որպես հայ մարդու և մանկավարժի մեծագույն ցանկությունս է, որ դպրոցն արժանի լինի իր կոչմանը, և նրա շրջանավարտը լիարժեք տիրապետի պետական լեզվին, ճանաչի իր հայրենքիը, լինի հայրենասեր, ունենա ազգային մտածողություն, ճանաչի հայ և համաշխարհային քաղաքակրթության նվաճումները, իմանա բնապահպանման հիմնախնդիրները, լինի բնության և շրջակա միջավայրի պաշտպան:

Ներկայումս Հայաստանը կանգնած է լուրջ մարտահրավերների առաջ: Կրթության ոլորտը կարևորվում է որպես երկրի կայուն առաջընթացի, մարդկային կապիտալի վերարտադրության ու զարգացման նախապայմաններից մեկը: Տարածաշրջանային և համաշխարհային գործընթացներին համապատասխան ազգային կրթական համակարգ զարգացնելը ներկայիս հրամայականն է: Ըստ այդմ՝ այն պետք է բավարարի և՛ յուրաքանչյուրին, և՛ ողջ հասարակությանն ու պետությանը, որպես հավաքական ամբողջություն:

Երևանի Երաժշտական h. 13 հատուկ դպրոց

Դպրոցը հասարակության զարկերակն է . . .